


ՊԱՅՄԱՆՔ



Տարեկան 2.60
Վեցամսեայ 1.50
Վեցամսեայ 7

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60
Վեցամսեայ 1.50
4 Ա. Ն. Խ. Ի. Կ.


Ծանոցման տողը
20 սանդղակ



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՁՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ



ՀԱՅՈՑԷ

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редация

на вѣстникъ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրողները եւս

չեն տրոշիր

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Մեր այն բաժանորդները որոնք
դեռ չեն հաճած իրենց ներկայ
տարւոյ բաժնեկիւնը վճարել, կը
խնդրուի որ փոքրացնեն: Տարւոյն
ի նկատմամբ աւելանալ կը չընեն:
Վերջինս յրազրի՜ բաժնեկիւնը
պէտք է կանխիկ վճարել:

ԿՈՄՍ ԻԳՆԱՏԻԷՎ

ԵՒ ՀԱՅԵՐԸ

ՍՅՈՒՆ, 28 ՍԵՊՏ.

Տեղւոյն Հովիւ Արտ. Տ. Յովհաննիս
Աւագ Քահանայ Մանթակունի
այսօր կոմս իգնատիէվ կէնէրային
ներկայանալով ֆրանսերէն լիզուով
ուղերձ մը արտասանեց ժողովարար
պէս հետեւեալ իմաստով.

«Ձեր վսեմութեան բարեբա-
տիկ գալատեան առթիւ Ձեզ ամէն
կերպ տեւական երջանկութիւն և
երկար կեանք մաղթելով, պատիւ
ունիմ ժողովուրդիս խորին զգա-
ցունքներով թարգման լինելու և
նորա խնդրուածքը՝ որ արձագանքն
է բոլոր Հայոց սրտերուն, ներ-
կայացնելու Ձեր վսեմութեան՝ ա-
յաջելով որ բարեհաճիք զետեղել
զայն յոտս կայսերական Գահոյից:
Վսեմափալ Տէր,

«Թուրք բարբարոս կառավարու-
թեան լուծին տակ հեծե՛ծող քրիս-
տոնեաները Ռուսիան կը ճանաչեն
իրիւ Աստղ-Փրկութեան: Մեր
նախնիք ալ սոյն գերագոյն մխի-
թարութիւնը կտակեցին մեզ, որ
մեր զԺբախտ օրերուն զօրավիգ
հղած է: Միանգամայն մենք Պուլ-
կարահայերս տեսած ենք մեր օրով
այս ազատարար Աստղին փալիւր
մեր այս նոր հայրենիքի երկնա-
կամարին վրայ: Սակայն Հայաս-
տանի մեր թշուառ եղբայրները,
որոնք երկար ատենէ ի վեր անլուր
տանջանքներու խաղաղիկ են դար-
ձած, յուսով կը դարձնեն իրենց
աղերսալի նայուածքը դէպ այս
Փրկութեան Աստղը:

«Դուք, վսեմափալ Տէր, փորձը

տուրք արդէն Ձեր ազնիւ սրտին
և բարեգութ հոգածութեան՝ մեր
զԺբախտ եղբայրներէս մեծ
բերելով Սան-Սթեֆանոյի փառա-
ւոր դաշնագրութեան 16րդ յօդ-
ուածքը:

«Հաճեցէք ուրեմն, վսեմափալ
Տէր, կրկին հայցել ողորմած գութը
Նորին վեհափառութեան Ռուսիոյ
կայսեր:

«Մեր նահատակաց ոգիները,
տառապելոց արտասուքը և նիզու-
թեան մէջ հեծե՛ծող կոյրերուն և
մանուկներուն աղաղակները զայս
կը հայցին Ձեր Բարձր վսեմութե-
նէն»:

Այս թախանձանքին ի պատաս-
խան, բարեգութ կոմսը, աչքերը
լեցուած, պատկեց թէ ինք ո՛րքան
հոգ տարած է ժամանակին Հայոց
ողբալի փճակը բարելաւելու:
Բայց Անգլիոյ դիմադրութիւնը
խորտակած է իր բոլոր բարի
գիտումները, և անով յառաջ եկած
թրքական վրէժնաբերութիւնը յան-
գած է այն սարսափելի կոտորած:
Ներուն և անլուր տանջանքներուն
որոց ենթարկուեցան և ենթակայ
ըլլալ կը շարունակեն Հայեր և Մա-
կեդոնացիք:

Յետոյ աւելցուց յուսադրական
խօսքեր և խոստացաւ ի պատեհ
ժամու իր բարեհաճակաւ ազդեցու-
թիւնը ի գործ դնել վեհափառ
Ձարին ձեռք, որուն ողորմած սիրտը
երբեք չէ դադրած Հայոց վիճակին
կտրեկցելէ:

Կրասն

ՕՐՈՒՆԱՆ ՔԱՂԱՔԱՎԱՆՈՒԹԻՒՆԸ

Գերմանական կառավարութիւնը
այս միջոցիս բաւական անստոյգ
ու զԺուարին կացութեան մը են:
Թարկուած կը մնայ. անշուշտ,
կայսրութեան արտաքին քաղաքա-
կանութիւնը չէ ապահով պէս որ
գերմանացի բաղադրագոյններու
մտահոգութիւն պիտի պատճառէր:
Երեակ զինակցութիւնը՝ զոր կը
թուէր թէ Ֆրանսիոյ ու իտալական
առեւտրական համաձայնութիւնը,
ու այս առթիւ երկու լատինացի
զբացի ժողովուրդներու մէջ ար-

ծարձուող փոխադարձ սերտ հա-
մակրանքը մահացու կերպով հար-
ուածած է, ցամաքային երեք Պե-
տութեանց միջև, վերանորոգուե-
ցաւ, 12 տարիի պայմանագրով մը
համար. այսպէսով, Գերմանիա մօ-
տաւոր ապագայի մը մէջ գոնէ
յարձակումի մը պատահականու-
թեան առջև մինակ մնալու երկիւ-
ղէն զերծ է, մինչ Պալքանիան
թերակողմի մասին Աւստրիոյ ու
Ռուսիոյ միջև գոյացած Գոշնա-
գիրը ու Միջերկրականի ու Աֆ-
րիկէի ազդեցութեան շրջանակնե-
րու վրայ Ֆրանսիոյ ու իտալական
թաքուն համաձայնութիւն մը ի-
րեն կարելի պիտի ընէ եւրոպական
որ և է կարեւոր խնդրոյ կարգա-
դրութեանը մէջ մասնակցութեան
իր բաժինը ունենալ:

Այս կողմէ չէ որ Գերմանիա որ
և է բաղձալու բան պիտի ունենար:
Կայսրութեան սպառնացող վտանգը
էապէս ներքին պատճառներու ար-
դիւնք է. յայտնի է որ Ռալսթը-
տակը (գերման խորհրդարան) իր
անպաշտօնէն մեծ ցանձնաժողով մը
կազմեր էր, մաքսային սակագնի
վերաբերութեամբ վերջնական ծրա-
գրի մը վրայ նախնական համաձայ-
նութիւն մը գոյացնելու համար:
Արդ, այսպիսի ծրագրի մը պատ-
րաստութիւնը անյաղթելի զԺուա-
րութեանց, անվերջ վիճաբանու-
թեանց դուռ մը բացու. Յանձնա-
ժողովը կազմող զանազան կուսակ-
ցութեանց հատուածները որ և է
կերպով իրարու հետ համաձայնու-
թեան մը յանգելու անկարող եղան:
Երկրագործական գասակարգը,
կղերական ու պահպանողական
հատուածներու պաշտպանութեամբ
բը, կառավարութեան կը պահան-
ջէ արգելական կամ մաքսապաշտ
սակագին մը. օտար երկիրներէ
կայսրութեան սահմանագիծները
խուժող ուտելիղէները, արմտիք
ու կարգ մը առօրեայ գործածու-
թեան արտադրութիւններ, աղգա-
լին երկրագործութիւնը կաւերեն,
ստեղծելով մրցակցութիւն մը զոր
տեղային երկրագործութիւնը կրե-
լու անգոր է. ուրեմն հարկ է, ան-
հրաժեշտ է զայն մօտալուտ կոր
ծանուէ մը աղատելու համար,
միակ ազդու ու արմատական մի-

ջոցին դիմել. երկիր մտնող այս
տեսակէ արտադրութիւնները ծանր
հարկերու ենթարկել, որով գերման
հրապարակը ողողող օտար ապ-
րանքներու քանակը ինքնին կը
նուազի. ահա երկրագործականնե-
րու պահանջումը:

ԳԺուարութիւնը հոն է որ այս
պահանջումը Ռալսթըտակի մէջ կա-
ռավարութեան մեծամասնութիւնը
ապահովող յետադիմական հատ-
ուածներէ կը բղիւխ. ու կառավա-
րութեան համար հոս հանգոյցը
կը կնճոտի, յուսահատեցնելու
չափ: Կայսրութեան արդի Դիւա-
նապետը, կոմս Պիւլով բնական է,
իր կողմնակիցները գոհացնելու հե-
տամուտ պիտի լինէր, ու իրաւա-
խօսութիւն մը կրնար ամէն բան
կարգի դնել: Բայց ճշդիւ իրաւա-
խօսութեան մը յանգելու այս քա-
ղաքարն է որ երկրագործական Ա-
լակովը կը ջղագրգռէ. անոնք
կուզեն կամ ամէն բան ունենալ,
կամ ոչինչ. կը հրաւիրեն կառավա-
րութիւնը որ կամ իրենց բոլոր
պահանջներուն գոհացում տայ,
անմիջապէս հաւանի արմտքի, ա-
նասուններու վրայ իրենց սակա-
գնոյն, ու կամ թէ կապառնան ա-
մէն բան յեղաշրջելու, զլանալու
ճարտարարուեստի վերաբերեալ
հարկերը, ու անկարելի ընելու ա-
ռեւտրական որ և է Գոշնագիր:

ԳԺուար է կառավարութեան
դիրքը. անոնց գոհացում տալով,
ոչ միայն երկրին ընդհանուր շա-
հերուն ծանր հարուած մը պիտի
տար, շատ մը չքաւոր անհատնե-
րու ապրուստը մեծապէս պիտի
զԺուարացնէր—չըսելու համար ան-
կարելի պիտի ընէր—այլ նաեւ
կայսրութեան միջազգային գործու-
նէութիւնը ու զինակցական կապե-
րը գուցէ ծանրապէս վտանգէր:
Մինչ իտալիա Ֆրանսայի հետ ա-
ռեւտրական Դաշնագրով մը կապ-
ուելով, Ֆրանսական հրապարակին
վրայ իր զանազան արտադրու-
թեանցը շահաւոր սպառում մը
կապահովէ, Գերմանիա՝ մաքսային
արգելական սակագին մը գործա-
դրութեան դնելով ու յանկարծ
հրապարակէն իր երկու Դաշնակից-
ներուն ապրանքները վտարելով,

աներկբայ անոնց առեւտրական շահերուն ծանր փնաս մը պիտի հասցնէ, որուն հակահարուածը անկարելի է որ երբեք պետութեանը միջիւ պահուած մը չը ձգէ: Երբեք զինակցութիւնը մինչեւ 1915 վերանորոգուեցաւ, իրաւ է. միայն թէ որ և է Պետութիւն իր շահերը միայն նկատողութեան առնելով է որ որիչի մը հետ կը զինակցի. անգամ մը որ այդ շահերը գոյութենէ կը դադրին, զինակցութեան ոգին ինքին կանհետանայ, ու դժուար պիտի ըլլար երկրիս վրայ գտնել ժողովուրդ մը որ Գիւշնագիր քա. ուած թուղթի կտորի մը իր շահերը զոհելու յոգաւ: Ու այսօր, առեւտրական շահերը որ և է Պետութեան մը շատ աւելի մեծ նշանակութիւն կը ներկայացնեն, քան ապագային մէջ որ և է պատերազմի մը պատահականութիւնը:

Միւս կողմէ, ապատ փոխանակութեանց կողմնակից դասակարգը, յառաջդիմական-արժատական ու ընկերվարական հասարակութեան բաղկացած, յամառ պայքար մը մղելու կը պատրաստուին. վերջին օրեր Միւնիխ կայացած գերման ընկերվարականներու տարեկան մեծ համաժողովը որոշում տուաւ իրաւ խըստակի մէջ ընկերվարական կուսակցութեան գործունէութիւնն ու բովանդակ ուժը արգելական սահմաններէ դէմ պայքարելու յատկացնել: «Մաքսային սակագնի գործադրութիւնը, կըսէր նոյն համաժողովոյն մէջ Պ. Պէպէլ» որ կուսակցութեան Տնօրէն Յանս Խրուսթիան Կապպա ընտրուեցաւ, երկրին համար աղէտ մը պիտի ըլլար, ու արմատներու ներկայ սղութեան առջեւ, անոր քուէարկութիւնը արտօնելը դաւաճանութիւն մը:» կ'ըսէ:

Աստիճանական, որչափ որ երկրագործականներու պահանջմանց գոհացում տալու բացարձակ անկարելիութեան մէջ կը գտնուի, միւս կողմէ հանգիստ ալ չէ որ այս անհոռի ինքնոյն մեջ իրեն ել գու. եւ թշնամի՝ յառաջդիմաւոր բոլոր հասարակութեան պաշտպանութիւնը կը վայելէ. մանաւանդ ընկերվարականներու հետ այս գաղափարակցութիւնը իրեն ստեղծում կը պատճառէ, երբ երեսփ, ընտրութեանց թուականն ալ շատ հեռի չէ: Բայց թէ քաղաքական հաշիւները երկրին իրական շահերէն գեւադասելով, երկրագործականներու պիտի հակի. պիտի յաջողի՝ համաձայնութեան մը յանգելու թէ ոչ խզումը անխուսափելի է. Պիւլի բախտը, ըսողնոր կան, այս հարցերու լուծումէն կ'ախելու է:

Տ. Է.

ԵՄԻՆ ԶՕԼԱՆ

«Իրաւունք» իր տաճկերէնի բաժին մէջ արձանագրեց արդէն տիեզերագետ Ժան Դելուսի Լիւի Զօլայի եղբորական մահը. կ'ըսէր ընկերակցութեամբ գիւղագիտութենէ Բարիդի քնակավայրը վերագտնաւով, վառարանը վառել տալէ ետք, ննջանքնակը առանձնացրէ է: առտուն խեղդամահ գտնուած է: Այս վախճանը ամէն կողմ յանկարծական տպաւորութիւն մը թողցւոյ. հակառակ իր վիթխարի արտադրութեանցը, Զօլա դեռ իր գործը լրացուցած չէր: Տրէյֆիւսի խնդրին մէջ իր հոյակապ գիւղագիտական գործունէութենէն վերջ, որով յետագիմականներու դէմ հանրագիտականերու ջանքերէն յաջողանալը յաջողցուց, Զօլա նոր վէպեր գրելու սկսեւ էր, որոնք — իր նախորդ վէպերուն անմահ որոնց մէջ գլխաւորաբար մարդկութեան ամէնէն թաղուն, ա-

մէնէն անխտատութիւն, բայց միայն գամայն ամէնէն իրական վէպերն ու թերութիւնները մերկացուցէր էր — կը ձգտէին լաւագոյն մարդկութեան մը, ընկերային տեսական կազմակերպութեան մը ճաշակը տալ: Լուրս, Բաւիլ, Հոնոլ երեք քաղաքները աւարտելէ ետք, ձեռնարկեց չորս Աւետարաններու հեղինակութեան, Բեդլինա-ուրտիլ, Աշխատիլ, ճշմարտութիւն որ տակաւին Օնորի մէջ նոր կը հրատարակուի. ու Արդարութիւն գորաւարտելու անկարող եղաւ: Ֆրանսան յեղաշրջող վերջին դէպքերէն զլիսաւորաբար սղուած այս վէպերը գրեց, որոնք զինքը բոլորովին նոր կերպարանով, նոր իմաստասիրութեամբ մը հանրութեան ծանօթացուցին:

Արդարեւ Էմիլ Զօլա սովորական մատենագիր մը չեղաւ. իր երկասիրութեանցը մէջ մեծ եղաւ միանգամայն արտադրութեանցը ստեղծութեամբը ու պարունակութեամբը. իր բովանդակ գործը, 40ի չափ հատորներէ բաղկացած, անով մանաւանդ նշանաւոր ու եղական է որ, անոր գրելիք բոլոր հատորները միակ ամբողջութիւն մը կը ներկայացնեն, դէպի միակ նպատակ մը դիմելով: Զօլայի գործին վրայ ճշգրիտ գաղափար մը գոյացնելու համար, բաւական չէ միայն անոր մէկ հատորը կարդալ. հարկ է անոր ամբողջ գործը ընթել: Անշուշտ. Ֆրանսա արտադրած է վիթխարի վիպասաններ, Տիւմա (300 հատոր վէպ), Հիւկո, Պալլաք, վերջինը մանաւանդ, գոյեթի իւմէնի այս հսկայ հեղինակը, որ շարաթներով, ամիսներով նոյնիսկ սենեակը առանձնացած, գուռն ու պատահաններու փեղկերը ամբողջութեամբ փակած, իր վիպագրական աշխատութեանցը կը պարագայէր, քամահելով առողջ պահութեան ամենատարրական օրէնքներն իսկ, մերժելով որեւէ այցելութիւն, ըլլայ իսկ մտերի մը, ու իր երեւակայութիւնը անդադար արծարծելով սուրճի առօրեայ հրէշային սպառնումով մը: Բայց ասոնցմէ ոչ մէկուն գործը կը ներկայացնէ այն միութիւնը, այն զիբար լրացնող, իրարմով լրացող ամբողջութիւնը գոր Զօլայի բաղժամեայ աշխատասիրութիւնը ունի:

Իր գործին մէջ ամէն բանէ առաջ, ամէն բանէ վեր ճշմարտիւն, իրական իրական պաշտամունքը ունեցած է. ժամանակակից ականատեսը ինչ որ վիպականութիւնը կը ներկայացնէր արտեստական, կեղծ, թիւր ու պատրիշ, Զօլա իր վէպերուն մէջ հիմնութիւն ներակ ուղղութեան մը յարեցաւ. վիպականութիւնը երկինքն ու աստղերը, ծաղիկն ու շողը, կոյսն ու տեսլական հայրենասէրը կը փառաբանէր: Զօլա նախասիրեց բիրտ իրականութիւնը. գործունէութեան թատր ընտրեց ոչ թէ տաճարը, ոչ թէ սէրը, ոչ թէ զկատուած, այլ բոլոր այն վայրերը ու թշուառութիւնը միահեծան կը գերազանէ, ուր նախապաշարմանը դայն կը նուիրողորմէն: Իրեն ծրագրին էր «բնութիւնը նկարել, խառնուածքի մը մէջէն դայն գրեթէ անխորդ զարդոյն տարտամ տեսլականութեան, հմայիչ անուրջներուն տեղ, գիտութիւնը, ճշմարտութիւնը, իրողութիւնները, փորձառականութիւնը բերաւ:

Ամէն բանէ առաջ խանդավառ հետեւող Օկիւսոյ Գոնդի, Դրական իմաստասիրութեան այն մեծ վարդապետին որ Բրիտտոսէ 19 դար յետոյ նոր կրօնը մը «Մարդկութեան կրօնը» ճիշտեց, Զօլա մերժեց «արուեստը արուեստին» վարդապետութիւնը, հետեւեալով գրականութիւնը ու անոր հրաշալիքները մարդկութեան բարութեանը ծառայեցնելու:

Անոր իմաստասիրութիւնը ոչ յոռետեսութիւն է, ոչ լաւատեսութիւն. մարդը իր բնածին էակ, ապականեալ մը չէ. բայց առաջիկային մէջ հեղհեղէտ անոր էութիւնը, անոր նկարագիրը, անոր զատարարականութիւնը ամբողջացնող պարագաները անհամար են. քննադատական պայման, ճակատագրականութիւն, ժառանգականութիւն, միջավայրի, տարիքի, զատարարականութեան, պատահականութեանց ազդեցութիւն. ահա թէ ինչ պատճառներ միահաղոյն կը գործակցին մարդու մը բնատուրութիւնը կերտելու համար. ու ինքը Զօլա, այդ բնատուրութիւնը ուսումնասիրեց ու ներկայացուց բոլոր այս մանրամասնութեանցը մէջ, ոչ թէ

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

(18)

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԱՐԻՒՆԱԼԻ ԹՈՒԱՅԱՆԸ...

- Ի՞նչ պիտի ընեն:
- Ի՞նչ չընեն մարդ մը որուն հոգին սեւցած է, որդեակ:
- Կը մատնեն զիս:
- Անպատճառ:
- Ատո՞նք... այդ յեղափոխականները:
- Հարկա՞ւ. ի՞նչու կը զարմանաք... որովհետեւ անոնց աչքին վտանգաւոր մարդ մըն էք ու Ազգային շահը չէք սիրել:
- Ի՞նչ կըսէք, Տէր Հայր, ձեր յայտնութիւնները կը սոսկացնեն զիս... մարդ մը յեղափոխականի տիրութեան մատնութիւն ընէ՞:
- Այո՛, հաւատացէ՛ք, որովհետեւ շարաթ մը չկայ որ լրտեսներով կը վխտայ ամբողջ քաղաքը: Գիտե՞ք ի՞նչ կընեն այդ ստորին արարածները: Կարգապէս ժողովուրդին անդորրութիւնը կամ կազմակերպութեան երկասարկներու մէջ երկպառակութիւն

մը մտնելու համար սա թաղային գործերը խառնել կուզեն: Եւ որովհետեւ, ինչպէ՞ս գիտէք, զարեւ է ի վեր մեր թաղականի ու հոգաբարձութեան կողմէն կան ու կան, քիչ մըն ալ խառնելու պէս, կը բորբոքին ու տակն ու վրայ կը դառնան: Այդ կռիւներէն օգուտ քաղելով, անմիջապէս ուժ կը հաւաքեն, համախոհներ կը գտնեն, ու այդ պարզ թաղականի կողմը կը դառնայ կազմակերպութեան սեւ ամպը:

Ներսէս Արծրունին ակամայ շարժում մը ըրաւ ու իր հոգեւոյն խորը զգացած ցաւը չկրցաւ արտայայտել: Օ՛հ, կարծես թէ արեւը կը սառէր իր երակներուն մէջ: Զորս տարի առաջ ի՞նչ օրինաւոր դրութեան մէջ կը տեսնէր իր սիրելի ծննդավայրը, իսկ չորս տարի ետքը ի՞նչ տխուր ու աղետաւոր երեւոյթի մը մէջ կը գտնէր:

— Ո՛հ, Տէր Հայր, չէ՞ք յուսար որ ամեն բան կընայ փոխուի, նկատել տուաւ Ներսէս Արծրունին անհանդարտ ու դառնութենէն խղզուած բացատրութեամբ մը:

— Եթէ արմատապէս նախկին դրութեան մէջ զննել ուզէք, ատիկա անկարելի է:

— Այո՛:

— Պատճառը:

— Որովհետեւ վէրքը բաւական յառաջ գացած է:

— Միթէ՞ Ազգին սիրոյն համար չպիտի ուզեն միանալ:

— Ատ դադափարը մտքերնուն անգամ չեն բերել: Ատոնք կը պնդեն թէ՛ Եկուսակցութիւն մը կազմակերպել՝ Ազգային յառաջդիմութիւն պատրաստել:

կը նշանակէ: Հետեւաբար պէտք է՝ Ազգը բաժնել:

— «Ազգը բաժնել» յառաջդիմութիւն պատրաստել կը նշանակէ, գոչեց Ներսէս Արծրունին յուզուած ձայնով մը:

— Ծիշդ այդ սկզբունքն ունին:

— Կեցէ՛ք, Տէր Հայր, ընդհատեց հսկայ մարդը: Վաղը տեսակցութիւն մը ունենանք Պ. Աւետիսեանի հետ այդ մասին: Զըլլա՞ր:

— Դուք գիտէ՞ք... միայն թէ զգուշութիւնը ձեռքէ հանելու չէ:

Տէր Սիմոն այս վերջին խօսքը տալէն ետքը «հանգիստ քուէ» մը ձաղթեց Ներսէս Արծրունին ու մեկնեցաւ:

Պատաւ մամիկը, որ խօսակցութեան միջոցին ներկայ չէր, ներս եկաւ ու թրթռուն ձայնով մը ըսաւ.

— Որչա՞փ բարեւ մարդ մըն է մեր Տէր Սիմոն, Ներսէ՛ս, իրա՛ւ որ հիշատակի մը պէս կը սիրուի: Կը տեսնե՞ս, ամենեւին փոխուած չէ. քսան տարի առաջ ի՞նչ սիրտ որ ունէր, այսօր միեւնոյն հայրենասէր սիրտը կը պահէ ու անոր կրակը մարած չէ:

Ներսէս Արծրունին այնքան խորապէս լեցուած էր որ չկրցաւ պատասխանել: Անոր երեւակայութեան առջին պատկերացած էր միթիւն ու ահաւոր ամպ մը որ կիջնէր պաշտած ազգին վրայ: Հետեւաբար չլսեց հօրքոյ ըսածները:

(Շարունակելի)

այնպէս, ինչպէս պիտի ուզէր, պիտի ուզէինք որ ըլլար, այլ այնպէս ինչպէս որ էր. մէկ բառով, մեր էութիւնը, մեր թիրուծիւնները մեզի ծանօթացուց:

Իր երկերուն մէջ յիշատակելի են, Թերեզ-Ռաֆինէ զատ, ուր խզի խայթի հոգեբանութիւնը կը ներկայացնէ, ու Մասըլիսն Ֆիւռայէ զատ, ուր առաջին անգամը ըլլալով էակի մը վրայ բնախօսական, ժառանգական, ճակատագրական ազդեցութեանց անողորմութիւնը կուսումնասիրէ, Ռալֆոն-Մալաուէնու շարքը, «երկրորդ կայսրութեան» մէջ ընտանիքի մը բնական ու ընկերական պատմութիւնը, 19 ստուար հատորներէ բաղկացեալ հեղինակութիւն մը, Ֆրանսական ժամանակակից դպրութեանց ամենէն հոյակապ յիշատակարաններէն մին, ուր վիպասանը փոխնիփոխ մանրամասնորէն կը հերքեն ու կուսումնասիրէ պոնաւորն (Ֆոյ Տը Լապի Մուռէ) ու գործաւորը (աւսուստ), զօրանոցն (Տէպալլը) ու բողոքողը (Մանա):

Ու այս անմահ հեղինակը ոչ համարաւոր իշխան մը եղաւ, ոչ կաճառական մը, ոչ պաշտօնական մատենագիր մը, այլ պարզ նախակրթարանի մը սեմերէն անդին ինքնօգնութեամբ յառաջացող աշխատակոր մը:

Տ. Է.

ՅԱՆՅԱՆՔԸ ՈՐՈՒՆ Է

Դ.

28 ՍԵՏՈՒԿԻ ԽԱՉԱԿՈՂՈՒԹԻՒՆԸ

(Շար. նախորդ թիւի)

Նամակաւոր ցրուելը, բայց նամակ մը յանձնեց ինձ եւ յանձնելէն վերջը նողկանքով երեսն նայեցաւ եւ գլուխը օրօրելով հեռացաւ: Բայց նամակին վրայ հասցէս սապէս գրուած էր պուլկարեթն:

«Մատնիչ գաւաճան Թարուծիւն Ճանկիւրեան»:

Նամակին ստորագրութիւնը կեղծ էր եւ գիրը նմանապէս կեղծուած: Նամակը վերէն ի վար քստմեկի հայհոյութիւններով լիքն էր. ուշագրաւ էր սպանալիքը, իբր թէ՛ եթէ ես Վառնայէն օր տալ չը հեռանայի նամակագիրը պիտի դար Վառնա եւ հրապարակաւ դաշուհանար պիտի ընէր զիս: Նամակը Պուլկարիոյ շատ անշան երկաթուղիի կայարանէն փոսթը ձգուած էր, ուր զարգացեալ հայ մը չէր գտնուեր. բայց կեղծուած գիրը թէ վարժ էր եւ թէ տառասխալներ չուէր:

Իսկոյն հասկցայ որ պարզ մեքենայական դարձուածք մըն էր. այդ նամակով կուզէին զիս վախցնել եւ Վառնայէն հեռացնել որպէս զի 28 սնտուկի խնդիրը ինքնին գոցուէր:

Մեր տխուր տղեկ Վարդուն քովս եկաւ եւ նամակը իրեն տուի. կարգաց, եւ կարդալէն վերջ պիւրախն ժպտով մը ըսաւ.

«Էլի ի՞նչ նշանակութիւն ունի. ախրը ես այս տեսակ նամակներ շատ ստացել եմ»:

Ես իսկոյն տեսայ որ համոզումս սխալ չէր. ու դարձայ իրեն ըսի.

— Վարդո՞ւ, շատ լաւ գիտեմ որ շատերը կուզեն այս խնդրէն ձեռնթափ ըլլալ. բայց մինչեւ վերջին շունչս պիտի աշխատիմ զաղտնիքն երեւան հանել:

— Ի հարկէ աշխատելու է զաղտնիքն երեւան հանելու ըսաւ:

— Ուրեմն դու ալ ինձ նման յեղափոխական մը ըլլալով քու ընդհանուր ներկայացուցիչ եղած միջոցիդ պատահած այս գողութիւնը երեւան հանելու ի՞նչու կը վախնաս եւ ի՞նչու ինձ հետ աշխատել չես ուզէր:

— Ինչպէս ըսած եմ, իմ դիրքս փափուկ է եւ այլն, ըսաւ:

Վարդոյի մեկնելէն վերջ իսկոյն եկաւ Առաքելը:

Ձե՞ որ որոշած էի այդ կատակերգութեան վերջ տալ. բայց նամակէն յուզումս աւելի առիթ տուաւ ինձ եւ խանութս գտնուող քանի մը պատուաւոր անհատներու ներկայութեան խիստ սպանալիքներ ըրի Առաքելին. եւ յայտարարեցի. «համոզուէ որ ոչ թէ Պուրկալ այլ աշխարհի որ ծայրն ալ երթալու ըլլաւ առանց 12 հազար ֆրանքն ամբողջացնելու, չես ազատուիր Յեղափոխականներու ձեռքէն»:

Առաքելը ըսաւ թէ՛ վաղը պիտի կողմնաւորեմ ինչպէս ատեն մը եւ վարդոյին հետեւ թագնուած «խոշոր ղէմքերը» (գողեր) երեւան պիտի հանեմ:

Շնորհակալ եղայ Առաքելին այս խոստումէն: Նա քովէս մեկնեցաւ:

Արդէն զրէթէ օրը օրին կը թղթակցէի Ռոստոմի հետ. Ռոստոմի նամակները միշտ երկզիմի կը գտնէի. երբեմն Առաքելի յանցանքը կը ծանրացնէր. երբեմն կը մեղմացնէր: Ինձ կը յանձնարարէր պաղարկելու թեմաք գործել եւ բնաւ չհաւաքուի. նամակներէն միոյն մէկ կը պատմէր թէ գողերէն մէկը Ֆիլիպէի կողմը կը գտնուի Պուլկար մըն է եւ պիտի երթայ անիկայ հարցաքննելու: Վարդոյի կեղծիքներն եւ խնդրէն փախուստ տայն ի նկատի ունենալով Ռոստոմին ստիպողական կերպով, գրած էի որ շուտով Վառնայ գայ: Երբ Առաքելը այդ խոստումն ըրաւ. կը խորհէի թէ Ռոստոմի Վառնա գալը եւ ընկերական ատենանին ներկայ գտնուիլը շատ լաւ պիտի ըլլար եւ գործը միանգամ ընդ միշտ պիտի պարզուէր:

Բայց միւս օրը երբ Առաքելը ընկերական ատենան պիտի կազմէր, առաւօտուն կանուխ Վարդուն խանութս եւ կաւ եւ ըսաւ թէ Առաքելը Պուրկալ գնաց:

Վարդոյին այս լուրը առնելուս պէս առանց իրեն պատասխան մը տալու անմիջապէս մատկոյով մը պուլկարական շոգնաւ գացի, որ մեկնելու վրայ էր. հասկցայ թէ դիտարար Վարդուն ուշ լուր տուած էր ինձի:

Ուղիղը հայելիի պէս պարզ էր. Վարդուն Առաքելը փախցուցած էր եւ եկած էր զիս ծաղրելու: Խանութս դարձայ. Վարդուն երբ տեսաւ որ բնաւ տրամադիր չեմ իրեն եւ իր ըսածնիւրուն կարեւորութիւն տալու, գլխիկոր ելաւ եւ խանութէս մեկնեցաւ:

Գործին մէջ զաղտնիք մը ըլլալը եւ Վարդոյի մեղսակցութիւնը պարզ կերպով կերեւէր: Պիւրկայի եւ Ռոստոմի «պաղարկելու թեմաք» գործէ եւ մի աւազարներ» գրածները իրենց նշանակութիւնները ունէին:

Միւս օրը Ռոստոմին նամակ մը առի որ քանի մը շինծու պատճառներով չէր կրնար Վառնայ գալ:

Յ. Կ. ՃԱՆԿԻԼԵԱՆ

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Պատրիարքարանի նպաստից սնտուկին մէջ քանի մը հաղար սուկի պատարաստ վրամ գտնուելով,

ծանօթ դրամատէրներու տոկոսի տրուել է:

Որբերու ինպատոհ հաւաքուած այդ գումարը փոխանակ տոկոսի տալու լուսագոյն պիտի ըլլար 50-100 որբ աւելի խնամելու գործածել, որով դրամը բուն իսկ նպատակին ծառայած կըլլար: Անդին անձի ու անպատասխար շատ որբեր կը կորսուին ու կը փճանան եւ կարեւոր մաս մըն ալ օտար մարդորս ներու ձեռք մնացած ըլլալով կան. հետեանայ հայութեան: Ասոնք փրկելով պէտք է թէ, տարին քանի մը տասնեակ սուկի տոկոս շահիլ աւսոնց արիւնին գնով:

— Լ'Առմէնիէ կրմանանք թէ Ռըվիտ տ'Էօռօրի աշխոյժ տնօրէնուհին, Տիկին Կոմսուհի Գօլօնայի Շուաղի-Լո-Ռուայի մէջ (Սէն) հիմնած որբանոցին բացումը ի օտոյ պիտի կատարուի: Ռուսանիայէ եկած քսան հոյ որբեր եւ որբուհիներ, Լուսաւորչակուն ու կաթիլիկ, հոն խնամեալ դաստիարակութիւն մը պիտի ստանան: Լուսաւորչակունները Բարիզի հոյ զաղթականութեան հովիւին վերին հսկողութեանը տակ պիտի ըլլան, եւ սա պիտի աւանդէ աւսոնց հոյ պատմութեան եւ կրօնագիտութեան դասերը: Կոմսուհի Գօլօնայի իր այս հաստատութեան ինպատոհ հանգանակութիւն բացած ըլլալով, մասնակցողներու աւաջին ցուցակը հրատարակած է ուր կը տեսնուի թէ 1,210 ֆրանք հաւաքուած է արդէն:

— Տիկին Երանուհի Բարթոլ պէյ Ազգ. Հիւանդանոցին այցելութիւն մը տալով, այդ առթիւ նուիրած է 20 սուկի Հիւանդանոցին եւ 5 սուկի Ս. Յսկորայ Որբանոցին:

— Օգոստոս ամսոյ մէջ Հիւանդանոցին համար եղած զանազան նուիրատուութեանց գումարը եղած է 4,044 զրուշ. իսկ Օգոստոս ամսոյ մէջ սկիւռի թուղթի հասոյթը եղած է 2,075 զրուշ:

— Խապրիւրի Գալֆեան Որբանոցի մայրապետ Երանուհի ծանրապէս հիւանդացած է:

Ս. Փրկչի Հիւանդանոցի Գրիստինէ մայրապետը առժամապէս տեղակալ կարգուած է:

Միւս կողմէ Որբանոցին նիւթական ցացութիւնն ալ վերջերս խախտած է. Պատրիարքը, մայրաքաղաքի կարող անձնաւորութեանց գրութիւն մը ուղղելով, Որբանոցին անձուկ վիճակը կը պարզէ, ու կոչում կընէ անոնց բարեփոխութեան որ պարտքի մատնուած ու չքաւոր որբուհիներ պատրաստող այդ հիմնարկութիւնը ստոյգ կործանուած մը ազատելու փութան:

— Կարնոյ եկեղեցւոյն շինութեան ֆէրմանը Դրան կողմէ Պատրիարքարանի յանձնուած է:

— Պոլսահայ օրաթերթ մը կը գրէ թէ Մարգուանի մէջ զօրանոցի մը շինութեան համար հարկ

եղած գետինը նուիրել է (.) քաղաքին հայ հասարակութիւնը, որ հանգանակութեամբ 300 սուկի ալ հաւաքել է, նոյն զօրանոցին շինութեան համար: Այս մեկնութիւնը, անշուշտ իրականութիւնը չէ՛ կարող ներկայացնել:

— Աֆիոն-Գարահիսարի հրկիզեալներուն ինպատոհ Պիլէճիկի եկեղեցիին մէջ շրջաբերուած քանձանակէն գոյացել է 400 զրուշ: Տեղւոյն հոյ երեւելիներն ալ յանձն առել են 600 զրուշ աւելցնել այդ գումարին վրայ եւ Պատրիարքարան ուղարկել:

— Մարգուանի մէջ, Գասպար Զատիկեան անուն հրիտասարգ մը, իր կենդանութեանը, 200 սուկի մօտ կտակ մը ըրել է բարեկամ տակ հաստատութեանց, հետեւեալ որոշումներով. 130 սուկի հաղթայի եկեղեցիին շինութեան, 30 սուկի քաղքին Ս. Աստուածածին վանքին, 10 սուկի տեղւոյն առաջնորդարանի շինութեան, 10 սուկի Ամասիոյ Ս. Աստուածածին եկեղեցիին եւ 5 սուկի նոյն եկեղեցիի աղքատներուն. այս պատուական երիտասարդը ամսոյս սկիզբները վախճանել է:

— Մեր նախորդ թուով մանրամասնօրէն ներկայացուցել էինք Ռուսահայ անձնաւորութեան մը, Գէորգ Յակոբեանի Ներսէսեան դպրոցի ու Տաճկահայերու ըրած նարեւոր մէկ կտակին տրամադրութիւնները. հանգուցեալին յուղարկաւորութեան հանգէսը Սեպտեմբեր 8ին, կերակի օր կատարուած է. կաթողիկոսը իր ներկայութեամբ պատուած է այս բարեւերին թաղումի արարողութիւնը:

— Լ'Առմէնի Գրի տը Բաշիէ հետեւեալը կարտատպէ. Ուրբաթ օր, Տրույո ապստանքը, գոհարեղեններու մեծ վաճառում մը կար. — Սքանչելի աղամանք մը, կը գան. չէ աճուրդի հանողը. Ամենազեղեցիկ քար մը, 25,000 ֆրանքի. — 26,000, կը բարձրացնէ ձայն մը. — 28,000. — 30,000. — 35,000. — 40,000. — 40,000 կը կաղկանձէ աճուրդի հանողը. Աղէ, պարոններ, գործը կարգին է: Սքանչելի աղամանք մը. — 42,000, մէկը կարտատպէ. — ներեցէք, կընդհատէ ծանօթ վաճառական մը, իր միլիոնատէր հայ մըն էր, կը հաճիք քարը ինձի տալ. — Հրամայէ՛, կը փութայ ըսելու ականագէտը. — 42,000 կը շարունակէ աճուրդի հանողը. Մէկ, երկու, երեք... — Ագամանդը կեղծ է, յանկարծ հայը կաղաղակէ. Յանկարծական լուրիւն մը. Ակնագէտը, մոլեգնած, Հայուն վրայ կը յառաջանայ. — Ի՞նչ ըսիք, պարոն, ի՞նչ ըսիք. — Ըսի թէ աղամանդը կեղծ է. — Դուք իմարէք. ես անձամբ զայն ըննեցի. — կը կրկնեմ թէ աղամանդը կեղծ է: Ահա մէկ միլիոննոց չէք մը, Չերը ըլլայ, եթէ աղամանդը կեղծ չէ: Մնաց որ, հայը կը շարունակէ,

լաւագոյն ապացոյցը, ահա՛ Ուրբաթընէն խարտոց մը քաշելով, աղամանդին վրայ չոր հարուած մը կուտայ որ զայն երկուքի կը բաժնէ։ Ապակի՛ մըն է եղեր։

— Անցեալ տարի գողութեան պատճառաւ վառնալի մէջ բանտարկուած Յակոբ Մարտիրոսեանն առնալով վերջին օրերս Գաւարնայի մէջ ալ հայ փերեզակի մը ապրանքները և հազուատները գողնալով քէօստէնէ փախած է։ Տեղւոյն ազգայինները գողնալուն համար զինք կը ծանօթացնենք, իր ալ ձեռքին մեծ մատին քովը իբրեւ հաճի «պուլկարի սազ» մը և նոյն ձեռքին վրայ դաշոյն մը նկարուած է։

Չարմանալի չի թուիր անշուշտ ինք ընթերցողաց երբ ըսենք թէ՛ այդ մարդուկը վառնալի մէջ ամբողջ ամիսներ յեղափոխական ծանօթ դասու մը պատկանողներու հետ ուս ուսի կը պտտէր։

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ ԲՕԼԻԹԻԳԻՅԷ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Կրանտիւք Նիքոլանըն Սթանպուլ կիթմէսինտէն տուալը Սուլթանն պէյան իթմիշ օլտըղը թէ շէքիրաթա ճէփապէն, Չար տախի թէլէկրաթիլէ մէֆուսինթիլի պէյան վէ Սուլթանն տալթ պուլընտըղըն արդ իթմիշ տիր։

— Սուլթան Կրանտինքիւ տէփաթիլէ հուզուրա գապուլ իտուպ, զիյաթիլէր վէրտիքտէն սօնրա, էն գըլմէթտար պիր չիթիթ աթ վէ սայիր եատէկեարլար իհտա իթտի, վէ Կրանտիւքիւն մուֆարէթի մինասիպէթ իլէ բէք սամիմանէ սուրէթտէ վէտալաշտըլար։ Կրանտիւք Նիքոլա ալաֆրանկա հուկտ. 5տէ Եալթայա կիթմէք իւզրէ Սթանպուլտան հարէթիլ իթմիշ տիր։

— Չարըն Լիվատիայա կէլմէսի մինասիպէթիլէ, Սուլթանն սապըգ խարիճիլէ նազըրը թուրխան բաշանըն թիյասէթի ալթընտս պիր հէյէթի մուրախասսա Չարա կէօնտէրէճէք տիր. մէզքիւր հէյէթ Նոյեմբեր 14տէ Լիվատիայա եթիլիւպ, Սուլթանըն սէլամլարըն Չարա թազտիմ իտէճէք տիր։

— Մօրնիկի Բօսքըն մուխպիրի Աթինատան պիտիրիյօր։

«Շարանըն էմիլիլէթ մէնպատան ալտըղըմ մալիւմաթ իւզրէ, իքի ալ էվիլէ Եոննան վէ Բուսէն հիւքիւմէթիլէր՝ Մաքէթոնիատա գաւըշըզըզլարըն էօնիւնիւ ալմագ իչիւն պէօյիւք տէվիլէթիլին Սթանպուլ էլիլէրինէ միւրաճաթ իթմէք պապընտա պէյինլէրինտէ իթթիֆագ հասըլ իթմիշէր իտի, Պու միւրաճաթ իգթիլա իտէն սէմէրէի հասըլ իթմիշ օլտըղընտան, մէզքիւր իքի հիւքիւմէթ չիմտի ալը մապսէթիլէ Պապը Ա-

լիլէ ալը պիր նօթա վէրմէք իչիւն մէսէլէի թէտգըգ իթմէքտէ տիրէր»։

— Կրանտիւք Նիքոլանըն բազիպ օլտըղը Բօսյիէտօնիլ հարպ վաբօրըն Սթանպուլ պօղաղընտան կէլմէսինթի Բուսիա թալէպ իթմէմիշ իսէ տէ, Մ. Չինօլիլէվ Պապը Ալիլէ՝ «էկէր Կրանտիւքէ քէնտի վաբօրըն իլէ պօղաղտան կէլմէսինթի միւրաճաթ օլընմագ իսէ, Սթանպուլ կէլմէքտէն սարֆը նազար իտէճէք» տէմիշ օլտըղընտան, տէրհալ Սուլթան մէզքիւր վաբօրըն կէլմէսինթի բէլ վէրմիշ տիր։

ՄԱՔԷԹՈՆԻԱ

Պու կիւն Մաքէթոնիատա ըսեան պարաղընը եիւքէքտէ թուլան գահարմանլարըն գօմիտանր բօլքիլիք Եանքօրըն տիկէր 28 գօմիթէ ըլիլիլէր իլէ պիր տապէթնամէ նէշր իտուպ, Մաքէթոնիալարըն ումուլ բանանա տալթիլ իթմիշ օլտըղըն էվիլէն հուզընը բտըգ, Մէզքիւր տապէթնամէ իլէ էսքի Մաքէթոնիանըն շէրէֆինի, Պէօյիւք Ալէքսանտր վէ սայիր նամտար հիւքիւմտարլարըն զիք իտէրէք, ումուլ միլլէթտաշլարընը ըսեան սանճաղը ալթընտ տալթիլ իտէյօրլար, Բէշա Պէրլին ահտանմէսինտէ Մաքէթոնիայա օթօնօնի վէրիլմէսի մուգտրէր օլտըղընը զիք իտէրէք, Էվրոսա միլլէթիլէրինէ խիլթապէն՝ «տէվիլթիլի պիլիմ մուգտտէս հուզուլ գըմըղըն մուհաֆաղաքնա ինսանիլէթ նամընա թէշվիլգ վէ իճպար իտինիլ, Պիլինիլք թի ալա սիւսըլ էլտէն պըրագմայաճաղըզ, պիլգէ վատ օլընան հազարըն էլտէ իտէնէ գատար, Մաքէթոնիանըն սէրպէս տիլէթի իչիւն հէֆիմիլ էօլիւմիւ կէօղիւմիւլէ ալըշըզ» տէյօրլար։

— Էսք-Ուսքիւն Սիպտ. 25 թարիլիլէ Մանասթըրտան գապուլ իթտիլի մէքիլէպ աթիտէքի հապատիսի վէրմիշ տիր։

«Իքի կիւն էվիլէ շէրիմիլգէ հազըն պուլընան իքի քէօյտէ շու եօլլէ իխիլիլալ զուհուր իթտի. 3 պուլլարլար պիր թիւրք ֆամիլիատան ինթիլգամ ալմագ իւզրէ խանէ սահիպինի վէ իքի շօճուգլարըն գաթիլ իթտիլէր։ Պուլտան հիտտէթիլէնէք քէօյիւն թիւրքէրի 12 պուլկար էօլտիւրտիլէր։ Պուլկարլար պիր գօմիթա չէթէսինի իմտատա չազրրտրլար։ Գալկա պէօյիւտիւ վէ 16 թիւրք էօլտիւ։ Նիհայէթ թիւրքիլէր զայէթ հիտտէթիլէնէք տէհէթիլի միւրատէմէլէր վուգու պուլտը. չէքիչ, պէլ, գաղմա, պալթա, բէվիլէր, էսկի վէ եէնի թիւֆէնքիլէր մէյառնա չըգտըլար... Նիհայէթ պուլկարլար խանէլէրինի վէ ալիլէրինի թէրքիլէ տաղարա գաշմայա պաշաւարլար, թիւրքիլէր պուլկար էվիլէրինէ աթէշ վէրուպ եագտըլար, Գաշան պուլկարլարտան չօղլարը

Մանասթըրա կէլուպ վալիտէն իմտատ թալէպ իթտիլէր, վալիան լէրին քէօյէ կիթմէլէրինի էմր իթտի, Ֆազաթ քէօյիլիլէրին կէօղիւ երմըշ օլտըղընտան ճէսարէթ իթմէլուպ խանլարտա գալտըլար, տիկէր քէօյտէ խաստրաթ աղ օլտըղըն սէպէպէ էհալի 17 զապիլիլէրին մուհաֆաղաք ալթընտա խանէլէրինէ կիթտիլէր, Շիմտի մէզքիւր քէօյիլէր տաքէրիլէր իհաթէ օլընմըշ տըր, Ֆազաթ սէֆիլ քէօյիլէրին գարարըն նէ՛ եօլտա թալմիւն օլընմագ տըր, քիւսէ պիլմէյօր...»

— Խիւրըլէր Մաքէթոնիատաքի ըսեանը էհէմիլիլէթիլ կէօսթէրմէկէ ալըշուպ տէյօրլար, «Սիւհա էլտէ պուլրնան աւըլտըն մըգատարը 3,000տէն նօգսան տըր, աօքէր տէրօլարընտան թիւֆէնքիլէր զապիլ իթմիշ օլմալարըն սահէհ տէկիլ տիր, Շիմտի Մաքէթոնիատա վէ Ալպանիատա 60,000 աքէր վէ 500 թօք մէվնուտ օլուպ, իգթիլա իտէր իսէ պուլըն իքի գաթը տախի սուհուլէթիլէ թօրլանապիլէնէկիւնտէն, իվրօրանըն ըսեանտան գօրգոյա հիշ պիր սէպէպի եօգ տըր, վէ իխիլալ իքէ գօյալ պատըրըլըր»։

ՏԱԽԻԼԻՅԷ

Սթանպուլտան վիլէննայա վէրիլէն մալիւմաթ իւզրէ Ֆէխամէթիլ Բօննա Ֆէրաինանտ սն կիւնտէն Սթանպուլա աղիմէթ իտէճէք իթմիշ։

— Գօնթ իգիտտիլիլէն նամընա բիլիննտէն պիր սանէմ (արձան) հաբտըրուպ, բօսթահանէ մէյառնընտ տիքմէք իչիւն Սօֆիա պէլէտիլէ ըլիլիլէրին թէքիլիլի ալգըշարիլէ գապուլ օլընմըշ օլմալիլէ, 5,000 ֆրանկ թախսիս իտիլմիշ տիր։

— Եսըն շէհրիմիլգէ Մաքէթոնիա իչիւն պիր պէօյիւք միլթիլկ թէճէմիլ օլընմագ տըր։ Պու պապտէ պիր գաշ կիւնտէն պէրու Սոնթրալ սալօնընտա միւլգէքիլէ օլընմագտա տըր։

ՍԵՐՊԻԱ

Կէչէն բազար կիւնիւ Պէլկրատ, տա՛ Էսք-Սիւրպիա սէքէնէսի պուլընան Մաքէթոնիալար միլթիլկ թէճէմիլ իթմիշէր տի իսէ տէ, բօլիլէր էհալիի տաղթտըլար, զիւրա գօմիթէ Սուլթանա գարըն հաքարէթիլի պիր գարար գապուլ իթտիլմէք իսթմիշ տիր, Ֆազաթ պէօյիւք գարընըզըզ զուհուրա կէլտի էհալի վէ բօլիւլէր պէյինիլտէ. բէք չօգտէ մէքիլէպ շափիւրտիլէր էհալի իլէ պէրապէր իտիլէր։ Բիւսէ տէրտէսթ օլընմատը։

ՊՕԼԻԼԷՐ

Պօէր մէնէրալարըն Պէլիլէն կիտուպ, իմէրաթօր վիլհէլմիլէ

կէօրիւլմէլէրի թէլէիլիւթա ուղրամըշ տըր, զիւրա Ալման հիւքիւմէթի՝ Պէրլինտէքի ինիլիլգ էլիլիսի թէքիլիլ և թէվաթիլ իթմէք իսէ պօէր մէնէրալար գապուլ իսէմէլէնէկիւնի, տնալթմըշ տըր։

— Ժէնէրալ Պօթա Հօյանտատա իրատ իթտիլի պիր նուլթգտա բէյիս Գիւրկէրին վէ Շիմայինի իպրաղ իթտիլէրի սէպաթ ու ֆէտաքեարըզտան պահպէ, պօէր գատընլար իչիւն տախի շէօյլէ սէօյլէմիշ տիր։

«Մուհարէպէտէ չօգ գատընլար էրքէրէրտէն տահա զիյառէ գահրէմանլըգ իպրաղ իթտիլէր, ինիլիլ օլտուսընըն նէզարէթի ալթընտա պուլընան գատընլար բէն, տի գօճալարընա, գարընտաշարընա վէ բէտէրիլէրինէ չօգ տէֆա շէօյլէ եագարլար բէր։

Պիր էվալտըմըգ տախի էօլտիւ. եախտ պիլթիւն էվալտարըմըգ էօլտիլէր, ֆազաթ սէն ճէսարէթիլ օլվէ սէրպէստիլէթիլ մուհաֆաղա էլլէ։ Պէնիմ տախի էօլթմիլթիլ տուլար իսէն ալա մուհարէպէ մէյառնընտան կէրի շէքիլմէ։

ՍՐԱՀ "ՍՈՆԴՐԱԼ"

Նախէճսա (Յոյս) հայ գերասանական խումբը իր առաջին ներկայացումը պիտի տայ այս գիշեր՝ առաջնորդութեամբ Տ. Վ. Պապեանի ԼիՕՆԻ ՍՈՒՐԶԱՆ. ԴԱԿԸ բարոյալից թատերգութիւն 6 արար եւ 2 պատկեր։

«ՅՅ օխանոց գլխու փորձանքը» խիստ ծիծաղաշարժ գաւեշտ 1 արար։

Վալը, կիրակի գիշեր, պիտի ներկայացուի Սուրբ Պօղոսի Եկեղեցոյն Չանգակախարը սրտաշարժ թատերախաղ 5 արար 2 պատկեր։

Խիծաղաշարժ գաւեշտ 1 արար։

Ա. Զ. Դ

Վառնայի կիւրոն փողոցնիլէն միոյն մէջ 4 սենեակէ բաղկացեալ բնակարան մը կը փնտռուի պատուաւոր եւ ոչբազմանգամ հայ ընտանիքի մը կողմէ։ Եթէ տունը հաւնուի մինչեւ 40 ֆրամսական կը վճարուի։ Դիմել խմբագրութեան։

ԹԻԻԽԶԱՐԻՑԷ

ՎԱՌՆԱ, 28 Սեպտեմբեր 20ԱՅԻՐԷ

ՊՈՒՂՏԱՅ	
Վալիօն Լիպ. 57-58 հ.թ. 8.40/9.-	
Արապալիպ. 53-62 հ.թ. 7.20/10.20	
ԱՐԲԱ	
Վալիօն 100 քիւ 9.- / 9.10	
Արապա 45-50 լիպ. հ.թ. 5.20/ 5.80	
ՉԱՎՏԱՐ	
Վալիօն 53-54 լիպ. 6.80/ 6.90	
Արապա 6.90/ 7.-	
ԲԱՅԻՑԱ, 100 քիւ 19.20/19.30	
ՅԱՍՈՒԼԻԱ 100 քիւ 14.- / 20.-	
ԵՈՒԼԱՅ	
Վալիօն 100 քիւ 10.- / 10.10	
Արապա հէթ. 5.- / 5.20	
ՄԻՍԻՐ	
Արապա լիպ. 56-57 հ.թ. 6.60/ 7.20	
ՏԱՐԸ լիպ. 57-58 հ.թ. 8.40/ 7.-	
Կիւնտէ 500.600 արապա վէ 25-30	
Վալիօն կէլմէքտէ տիր։	
Վալիօն մուամէլէսի ալթուլ ֆըրանքէ, արապա կիւմիլիլէ։ Նաթօէօն 21 ֆրանք։	

Оповорникъ Н. Драгулевъ
Печ. на Хр. Н. Войниковъ—Варна